

ՊԱՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

**ՓՈՆԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՕՏԱՐԵԿՐՅԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Դատական ակտերը, որպես կանոն, տարածքային գործողության բնույթ ունեն։ Պետությունների ինքնիշխանության սկզբունքից ելնելով, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածում, յուրաքանչյուր պետություն պետք է հարգի մյուս պետությունների՝ սեփական տարածքում դատական իշխանություն իրականացնելու իրավունքը։ Նշված սկզբունքի վերլուծությունից պարզ է դառնում, որ մի պետության տարածքում ընդունված դատական ակտը չի կարող անմիջական իրավական ուժ ունենալ մեկ այլ պետության տարածքում։ Սակայն ներկայումս ընթացող համընդհանուր միասնականացման շրջանակներում և միջազգային համագործակցության պայմաններում քիչ չեն դեպքերը, երբ մի պետության դատարանի կայացրած ակտը պետք է ճանաչվի, իսկ հաճախ նաև կատարվի մեկ այլ պետության տարածքում։ Օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման անթույլատրելիության դեպքում ամբողջությամբ չի կարող իրականացվել նաև միջազգային մասնավոր իրավունքի կարևորագույն նպատակներից մեկը՝ օտարերկրյա իրավական համակարգերով երաշխավորված իրավունքների պաշտպանությունը։ Որպեսզի մեկ պետության դատական մարմնի կողմից ընդունված դատական ակտը ձեռք բերի իրավական ուժ մեկ այլ պետության տարածքում, հարկավոր է, որ վերջինս այդ կապակցությամբ որևէ ձևով տա իր համաձայնությունը։ Օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման թույլատրելիության հարցը յուրաքանչյուր երկրում կարգավորվում է այդ երկրի ազգային օրենսդրությամբ, այդ թվում՝ նրա մասնակցությամբ գործող միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերով։

ՀՀ-ում օտարերկրյա դատարանների կողմից կայացված դատական ակտերի ճանաչմանը և

կատարմանը վերաբերող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247⁶ և 247⁷ հոդվածներով։ Մասնավորապես, ՀՀ ԶԴՕ 247⁶ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետության տարածքում»։ ՀՀ ԶԴՕ 247⁷ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը պարզում է միայն, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով։ Համապատասխան միջազգային պայմանագրի պահանջները պահպանված լինելու և ճանաչումը մերժելու՝ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը որոշում է կայացնում օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու մասին»։ Նշված հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը թույլատրվում է միայն, եթե համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված է այդպիսի ճանաչման և կատարման հնարավորությունը։ Այդ պայմանագրի համապատասխան հոդվածներով էլ պետք է առաջնորդվեն ՀՀ դատարանները օտարերկրյա դատարանների դատական ակ-

տերը ճանաչելիս և կատարման թույլատրելիս: Համապատասխան միջազգային պայմանագրի առկայությունը՝ որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման պարտադիր նախապայման, հետխորհրդային պետություններից որդեգրել են նաև ՌԴ-ն¹, Ուզբեկստանը², Տաջիկստանը³, սակայն հետխորհրդային պետությունների մեծ մասը՝ Վրաստանը, Բելոռուսը, Ուկրաինան, Գրդզստանը⁴, Մոլդովան⁵ հրաժարվել են միջազգային պայմանագրի առկայության՝ որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման պարտադիր պահանջից՝ իրենց օրենսդրություններում ամրագրելով միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած փոխադարձության սկզբունքը:

Ներկայումս գրականության մեջ բազմաթիվ տեսաբանների կողմից արտահայտվում է տեսակետ առ այն, որ ԱՊՀ այն պետություններում, որոնց օրենսդրություններում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման համար պարտադիր պայման է հանդիսանում այդպիսի ճանաչումը և կատարումը թույլատրող համապատասխան պայմանագրի առկայությունը, այդպիսի պահանջը պետք է փոխարինվի փոխադարձության վերաբերյալ պահանջով, որը ենթադրում է, որ օտարերկրյա պետության դատական ակտը կարող է ճանաչվել և կատարվել հայցվող պետությունում, եթե օտարերկրյա տվյալ պետությունը համապատասխանաբար ճանաչում և կատարում է հայցվող պետության դատարանների դատական ակտերը՝ անկախ այդ պետությունների միջև համապատասխան միջազգային պայմանագրի առկայությունից⁶: Անգամ բելոռուսական իրավաբանական գրականությունում, չնայած այն հանգամանքին, որ Բելոռուսը արդեն իսկ մասնակիորեն հրաժարվել է միջազգային պայմանագրի առկայության պահանջից, նշվում է, որ Բելոռուսիայում միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում օտարերկրյա դատական ակտերի կատարման անհնարինության փաստը հանգեցնում է բելոռուսական կողմերի շահերի խախտման, քանի որ բելոռուսական դատարանների որոշումների կատարումն էլ այն պետություններում, որոնք, ինչպես Գերմանիան, պահանջում են փոխադարձության առկայություն, նույնպես դառնում է անհնար⁷: Մ.Մ. Բոգուսլավսկին նշում է, որ նման նկատառումներն անհանգստացնում են նաև ԱՊՀ մյուս պետությունների օրենսդիրներին⁸: Ցավոք, ՀՀ իրավաբանա-

կան գրականության մեջ օտարերկրյա դատական ակտերի ճանաչմանը և կատարմանը՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա, անդրադարձ չկա: Միայն, մինչև ՀՀ ԲԴՕ-ն ընդունելը, ԵՊՀ քաղաքացիական ամբիոնի հեղինակային կոլեկտիվը առաջարկել էր ՀՀ ԲԴՕ-ում ներառել հոդված, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատարանների վճիռները պետք է ճանաչվեն և կատարվեն, եթե դա նախատեսված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով կամ փոխադարձության սկզբունքով, որը, սակայն, ՀՀ ԲԴՕ-ում չներառվեց:

Պարզելու համար, թե արդյո՞ք նպատակահարմար է ՀՀ ԲԴՕ-ում ամրագրել դատական ակտերի ճանաչման փոխադարձության սկզբունքը, անհրաժեշտ է անդրադառնալ այս սկզբունքի բովանդակությանը, դրա դրական և բացասական կողմերին, ինչպես նաև այն հարցին, թե փոխադարձությունը ՀՀ ԲԴՕ-ում ներառելու հարցին դրական պատասխան տալու դեպքում ինչ մեկնաբանությամբ պետք է այս սկզբունքը ներառվի այնտեղ:

Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը՝ փոխադարձության հիման վրա, ենթադրում է, որ հայցվող պետությունը օտարերկրյա պետության դատարանի դատական ակտի ճանաչումը և կատարումը կապում է համապատասխան օտարերկրյա պետությունում սեփական դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորության կամ փաստի հետ: Այս բնորոշումից արդեն իսկ բխում է, որ փոխադարձությունը միանշանակ չի ընկալվում, և տարբեր պետություններ, ամրագրելով փոխադարձության սկզբունքը, դրա առկայությունը կապում են տարբեր հանգամանքների հետ:

Այսպես, մի շարք պետություններում, որոնք ամրագրել են փոխադարձության սկզբունքը իրենց օրենսդրություններում, փոխադարձությունը համարվում է առկա, եթե օտարերկրյա պետության դատական պրակտիկայում առկա են հայցվող պետության դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր: Այսինքն՝ այս պետությունների դատարանները օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության քննության յուրաքանչյուր դեպքում պետք է պարզեն՝ գոյություն ունե՞ն արդյոք համապատասխան օտարերկրյա պետությունում սեփա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր: Այսպիսի պետությունների թվին են դասվում, օրինակ, Պերուն⁹, Չինաստանը: Չինաստանում օտարերկրյա դատական ակտը կարող է ճանաչվել միայն այն դեպքում, եթե չինական դատարանների համանման դատական ակտերը կատարվել են համապատասխան օտարերկրյա պետությունում կամ գոյություն ունեն Չինաստանի Ժողովրդական դատարանին ներկայացված ապացույցներ առ այն, որ չինական դատարանի դատական ակտը կճանաչվի այդ պետությունում¹⁰: Պետք է նշել նաև, որ չնայած այն հանգամանքին, որ ՌԴ-ում օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման համար միջազգային պայմանագրի առկայությունը պարտադիր պայման է, այնուամենայնիվ, ռուսական դատական պրակտիկայում առկա են այնպիսի պետությունների դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության քննության դեպքեր, որոնց հետ ՌԴ-ն իրավական օգնության մասին միջազգային պայմանագիր չի կնքել, և ՌԴ դատարանները, առաջնորդվելով փոխադարձության սկզբունքով, ճանաչել են այդպիսի օտարերկրյա դատական ակտերը¹¹: Սակայն փոխադարձության սկզբունքի կիրառման եզակի դեպքերում ՌԴ դատարանները առաջնորդվել են փոխադարձության սկզբունքի պահպանության վերոնշյալ մեկնաբանությամբ, և որոշ դեպքերում մերժել են օտարերկրյա դատական ակտերի ճանաչումն ու կատարումն այն պատճառաբանությամբ, որ համապատասխան օտարերկրյա պետությունում ռուսական դատարանների դատական ակտերի ճանաչման դեպքեր չեն գրանցվել¹²:

Իրենց օրենսդրություններում փոխադարձությունը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նախապայման ամրագրած պետությունների մյուս խմբի համար էլ օտարերկրյա պետությունում իրենց դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր չհայտնաբերելը դեռևս հիմք չէ այդ պետության դատարանների դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու համար: Փոխադարձության հնարավորությունը այս դեպքում գնահատվում է օտարերկրյա պետության օրենսդրության ուսումնասիրության արդյունքում: Փոխադարձության սկզբունքի առկայությունը մասնավորապես նման կերպ են պարզում Թուրքիայի¹³, Գերմանիայի դատարան-

ները: Այսպես Գերմանիայում փոխադարձության բացակայությունը համարվում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու ինքնուրույն հիմք: Մերժման նման հիմքի բացակայությունը պարզելու համար գերմանական դատարանները օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության քննության յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրում են հայցող պետության դատական պրակտիկան՝ պարզելու համար՝ արդյո՞ք այդ պետությունում գրանցվել են գերմանական դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր: Օտարերկրյա պետությունում Գերմանիայի դատական մարմինների որոշումների ճանաչման պրակտիկայի բացակայությունը, սակայն, դեռևս այդ պետության դատարանների դատական ակտերի մերժման անվերապահ հիմք չի հանդիսանում, և գերմանական դատարանները ուսումնասիրում են հայցող պետության օրենսդրությունը՝ պարզելու համար՝ արդյո՞ք այն հնարավորություն տալիս է ճանաչելու և կատարելու գերմանական դատարանների դատական ակտերը: Ընդ որում ուսումնասիրության արդյունքում գերմանական դատարանը համեմատում է գերմանական օրենսդրությունը օտարերկրյա պետության օրենսդրության հետ, և եթե վերջինիս նորմերը համադրելի են Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 328-րդ հոդվածի հետ, որը հենց սահմանում է փոխադարձության սկզբունքը, ապա դա գերմանական տեսակետից ենթադրում է փոխադարձության առկայության երաշխիք՝ «առաջին քայլ» կատարելու պատրաստականության տեսանկյունից¹⁴:

Փոխադարձությունը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նախապայման ամրագրած պետությունների երրորդ խումբն էլ (Ուկրաինա¹⁵, Մակեդոնիա¹⁶) փոխադարձության առկայությունը պարզելիս առաջնորդվում է դրա առկայության կանխավարկածով, ըստ որի՝ փոխադարձության առկայությունը ենթադրվում է, եթե չի ապացուցվել հակառակը: Սա օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության առկայության պահանջի ամենամեղմ դրսևորումն է, որն առավել տարածված է փոխադարձության սկզբունքը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման նախապայման իրենց օրենսդրություններ-

www.lawinstitute.am

րում ամրագրած պետություններում:

Բացի այդ, գոյություն ունի փոխադարձության երկու տեսակ՝ լրիվ և մասնակի: Առաջինի դեպքում պետությունը մերժում է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտի ճանաչումը, եթե վերջինիս դատական պրակտիկայում գոյություն ունեն իր դատարանի՝ ցանկացած գործով կայացրած դատական ակտերի ճանաչման և կատարման մերժման դեպքեր: Այսպես, եթե այն պետությունում, որտեղ կայացվել է օտարերկրյա դատական ակտը, նախկինում մերժվել են, օրինակ, ալիմենտի բռնագանձման հետ կապված գործով հայցվող պետության դատարանի դատական ակտի ճանաչումը և կատարումը, ապա վերջինս կմերժի տվյալ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված ցանկացած դատական ակտ՝ լինի դա ալիմենտի բռնագանձման, որդեգրման, փոխառության պայմանագրից բխող պարտավորությունների կատարման, թե այլ գործերի վերաբերյալ: Մասնակի փոխադարձության առկայության դեպքում հայցվող պետության դատարանը կմերժի օտարերկրյա դատական ակտի ճանաչումը, եթե օտարերկրյա պետությունը մերժել է իր դատարանների՝ համանման գործով կայացրած դատական ակտի ճանաչումը և կատարումը: Այսինքն՝ եթե օտարերկրյա պետությունը մերժել է հայցվող պետության դատարանի ալիմենտի բռնագանձման վերաբերյալ գործերով օտարերկրյա պետության դատարանների դատական ակտերի ճանաչումը և կատարումը: Համեմատական իրավունքում լայնորեն ամրագրված կանոնի համաձայն՝ լրիվ փոխադարձության պահանջ, այսինքն՝ պահանջ, որպեսզի ազգային դատարանների բոլոր տեսակի դատական ակտերը ճանաչվեն և կատարվեն արտերկրում, չի պահանջվում¹⁷: Որպես կանոն՝ փոխադարձության սկզբունքը ամրագրած պետությունների համար բավարար է լինում միայն փոխադարձության մասնակի պահպանումը:

Խոսելով փոխադարձության սկզբունքի դրական և բացասական կողմերի մասին՝ առաջին հերթին պետք է նշել, որ ի տարբերություն համապատասխան միջազգային պայմանագրի առկայության պահանջի՝ փոխադարձության առկայության

պահանջը ընդլայնում է տարբեր պետությունների համագործակցությունն իրավական օգնության բնագավառում, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային պայմանագրի առկայությունը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման նախապայման իրենց օրենսդրություններում ամրագրած պետությունների փորձը, նման պայմանագրեր կնքվում են սահմանափակ քանակով պետությունների հետ, ինչը հանգեցնում է պետությունների, այսպես կոչված, իրավական մեկուսացման: Բացի այդ, ի տարբերություն փոխադարձության սկզբունքի, որի առկայության դեպքում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման պայմանները ամրագրվում են ներքին ճյուղային օրենսդրությամբ, և այդ պայմանները պետության օրենսդիր մարմնի կողմից կարող են ցանկացած պահի փոփոխվել միջազգային մասնավոր իրավունքի զարգացմանը զուգընթաց, միջազգային պայմանագրի՝ որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նախապայմանի առկայության դեպքում, այս ինստիտուտը կարգավորվում է համապատասխան միջազգային պայմանագրով, իսկ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելը այդպիսի պայմանագրերում անհամեմատ ավելի բարդ է, և բյուրեղացնում է այս ինստիտուտը կարգավորող օրենսդրությունը, դանդաղեցնում դրա զարգացումը:

Գրականության մեջ ի պաշտպանություն փոխադարձության սկզբունքի անհրաժեշտության՝ նշվում է, որ փոխադարձության սկզբունքի ամրագրումը պետությանը հնարավորություն է տալիս ստիպել այլ պետություններին հարգելից վերաբերմունք դրսևորել իր դատարանների դատական ակտերի նկատմամբ և ճանաչել դրանք: Որպես օրինակ բերվում է Բելոռուսը, որը ստիպված եղավ վերանայել իր օրենսդրությունը և հրաժարվել դատական ակտերի ճանաչման և կատարման համար պարտադիր պայման համարվող միջազգային պայմանագրի առկայության պահանջից տնտեսական հարաբերությունների բնագավառում, քանի որ մի շարք պետություններ, և առաջին հերթին Գերմանիան, հրաժարվում էին ճանաչել Բելոռուսի դատարանների դատական ակտերը փոխադարձության բացակայության պատճառով¹⁸:

Գրականության մեջ փոխադարձությունը նաև հիմնավորվում է այն գաղափարով, որ պետու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունը պետք է ազատ լինի էկզեկվատուրան մերժելու հնարավորության մեջ այն պետությունների նկատմամբ, ովքեր իրենց հերթին մերժում են նրան¹⁹:

Փոխադարձության սկզբունքի կիրառմանը կողմ արտահայտվող տեսաբան գիտնականները գտնում են նաև, որ փոխադարձության սկզբունքը լավագույնս պաշտպանում է մարդու իրավունքները և օրինական շահերը օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում: Այսպես, Տ. Ն. Նեշատանան նշում է, որ օտարերկրյա դատական ակտերով սահմանված քաղաքացիական իրավունքների ճանաչման ոլորտում փոխադարձության բացակայությունը կարող է հանգեցնել պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում իր պարտավորությունների խախտմանը²⁰: Այս կարծիքի հետ չափազանց դժվար է համաձայնել: Այո՛, օտարերկրյա դատական ակտերը չճանաչելը և կատարման չթույլատրելը առաջին հերթին խախտում է այն անձանց (ֆիզիկական և իրավաբանական) իրավունքներն ու օրինական շահերը, ում նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է օտարերկրյա դատական ակտը, իսկ այդ անձինք որևէ մեղք չունեն, որ դատական ակտը կայացնող դատարանի պետության և հայցվող պետության միջև առկա չէ միմյանց դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն նախատեսող համապատասխան միջազգային պայմանագիր: Միջազգային պայմանագրի առկայության պահանջի համեմատ փոխադարձության պահանջը զգալիորեն ազատականացնում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտը, սակայն փոխադարձության սկզբունքի կիրառմամբ էլ խնդիրը չի վերանում: Փոխադարձության դեպքում էլ պետությունը մերժում է օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը, եթե ակտը կայացնող դատարանի պետությունում չեն ճանաչվում իր դատարանների դատական ակտերը, կամ այդ պետության օրենսդրությամբ սահմանված չէ իր դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն: Այս դեպքում ևս օտարերկրյա դատական ակտի չճանաչումից առաջին հերթին տուժում են մասնավոր անձինք, ովքեր որևէ կապ չունեն պետությունների միջև փոխադարձության սկզբունքի բացակայության հետ: Այս հան-

գամանքը հենց հանդիսանում է փոխադարձության սկզբունքի «ամենաթույլ կողմը», և հենց այս միտքն է ընկած տարբեր պետություններ ներկայացնող բոլոր այն տեսաբան-գիտնականների հիմնավորումներում, ովքեր դեմ են արտահայտվում փոխադարձության սկզբունքի կիրառմանը օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում: Այսպես, գերմանացի իրավագետ Խ. Շակը, խոսելով փոխադարձության մասին, նշում է, որ եթե նույնիսկ փոխադարձության պահանջը չի հակասում միջազգային իրավունքին, այնուամենայնիվ անարդար է օտարերկրյա քաղաքացիներին դեմ դատավարական առումով ոչ շահեկան վիճակում, քանի որ նրանք հազիվ թե կարողանան ազդել օտարերկրյա պետության վարքագծի վրա²¹:

Փոխադարձությանը դեմ արտահայտվող հեղինակների մյուս փաստարկը փոխադարձության առկայության հաստատման բարդությունն է և օտարերկրյա պետությունների դատարանների հետ փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորումը, երբ փոխադարձություն պահանջող երկու պետություններից յուրաքանչյուրը կարող է սպասել մյուսի կողմից առաջին քայլին, որն էլ իր հերթին կարող է բերել այսպես կոչված «փակ շրջանի»²²: Այս նկատառմանը կարելի է համաձայնել միայն մասամբ, քանի որ, ինչպես արդեն նշվել է, փոխադարձության մեկնաբանությունը տարբեր պետություններում տարբեր է, և «փակ շրջանը» պետություններին սպառնում է միայն այն ժամանակ, երբ նրանք որդեգրում են փոխադարձության առկայության մեկնաբանման այն տարբերակը, ըստ որի՝ փոխադարձությունը առկա է, եթե դատական ակտը կայացրած պետության դատական պրակտիկայում գոյություն ունեն ճանաչող պետության դատարանների դատական ակտերի ճանաչման դեպքեր: Սակայն, եթե պետությունը առաջնորդվում է փոխադարձության կանխավարկածով, ըստ որի՝ փոխադարձությունը առկա է, քանի դեռ չի ապացուցվել հակառակը՝ չեն հայտնաբերվել ճանաչող պետության դատարանների դատական ակտերի՝ հայցող պետությունում ճանաչումը և կատարումը մերժելու դեպքեր, «փակ շրջանի» առաջացման վտանգը վերանում է:

Չնայած փոխադարձության սկզբունքի մի շարք թերություններին՝ գտնում ենք, որ ՀՀ օրենսդրության մեջ դրա ամրագրումը, առավել քան նպատակահարմար է հետևյալ նկատառումներով:

Ակնհայտ է, որ ի տարբերություն ՀՀ ներպետական օրենսդրությունում ներկայումս ամրագրված օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն նախատեսող միջազգային պայմանագրի առկայության պահանջի՝ ՀՀ օրենսդրությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության սկզբունքի ամրագրումը կրերի այս ոլորտի անհամեմատ ազատականացման, ինչն անհրաժեշտ է ՀՀ-ն իրավական մեկուսացումից դուրս բերելու համար. ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետությունը մինչ այժմ դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն և կարգ նախատեսող իրավական համագործակցության մասին միջազգային պայմանագրեր կնքել է ընդամենը տասնութ պետությունների հետ, որոնցից տասնմեկը Միևսկի և Քիշնևյան կոնվենցիաների մասնակից պետություններն են (նրանցից Ադրբեջանի հետ ՀՀ-ն չունի դիվանագիտական հարաբերություններ), և յոթը արաբական և արևելյան Եվրոպայի պետություններն են: Ակնհայտ է, որ ներկայումս ՀՀ քաղաքացիների քաղաքացիական և առավել ևս առևտրային շրջանառությունը չի սահմանափակվում հիշյալ երկրների աշխարհագրությամբ: Միայն այն հանգամանքը, որ ՀՀ-ն չունի դատական ակտերի փոխադարձ ճանաչում և կատարում նախատեսող իրավական օգնության պայմանագրեր այնպիսի պետությունների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան, արևմտյան Եվրոպայի մյուս պետությունները, ԱՄՆ-ը, Լատինական Ամերիկայի պետությունները և այլն, որտեղ բնակվում են ՀՀ բազմաթիվ քաղաքացիներ, և որոնց հետ ՀՀ քաղաքացիական և առևտրային շրջանառությունը գտնվում է բավականին բարձր մակարդակի վրա, արդեն իսկ բավարար փաստարկ է այս ոլորտում միջազգային պայմանագրի պարտադիր պահանջից հրաժարվելու համար: Բացի այդ՝ փոխադարձության սկզբունքի ամրագրումը, հետևաբար և այս բնագավառում ՀՀ օրենսդրության ազատականացումը կմեծացնի ՀՀ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վստահությունը, կամրապնդի վերջիններիս դիրքերը համաշխարհային տնտեսությունում, կխթանի ՀՀ տնտեսության զարգացմանը (օտարերկրյա սուբյեկտները, մտնելով տնտեսական համագործակցության մեջ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների հետ, վստահ կլինեն, որ ցանկացած խնդրի

առաջացման դեպքում նրանց իրավունքները և օրինական շահերը՝ այդ թվում և օտարերկրյա դատական ակտով ամրագրված, առավելագույնս պաշտպանված կլինեն ՀՀ-ում):

Հարց կարող է ծագել՝ ինչու՞ փոխադարձություն: Ավելի նպատակահարմար չէ՞ արդյոք հրաժարվել և՛ համապատասխան միջազգային պայմանագրի առկայության պահանջից, և՛ հաշվի առնելով փոխադարձության սկզբունքի կիրառման հետ կապված դժվարությունները և դրա թերությունները՝ նաև փոխադարձությունից, իսկ օտարերկրյա դատական ակտերը ճանաչել առանց նման նախապայմանների՝ միակ նախապայման սահմանելով օտարերկրյա դատական ակտի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանվելիք պահանջներին բավարարելը: Կարծում ենք՝ ոչ: Այնպիսի պետությունում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ անկախության առաջին տարիներից, իսկ մինչ այդ նաև Կայսերական Ռուսաստանի, ապա նաև ԽՍՀՄ կազմում, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը կարգավորող օրենսդրությունը կրել է բավականին փակ բնույթ՝ թույլատրելով միայն այն պետությունների դատական ակտերի ճանաչումը և կատարումը, որոնց հետ Կայսերական Ռուսաստանը, ԽՍՀՄ-ը ապա նաև ՀՀ-ն ունեցել են համապատասխան միջազգային պայմանագրեր, որտեղ դեռևս ներպետական դատարանների մեծ մասը ամբողջությամբ չի ընկալում այս ինստիտուտի էությունը՝ չտարբերելով այն դատական հանձնարարությունների ինստիտուտից²³, որի օրենսդրության մեջ դեռևս առկա են այնպիսի օրենսդրական բացեր, ինչպիսին է ՀՀ դատարանների՝ բացառիկ միջազգային իրավասությանը պատկանող գործերի շրջանակի վերաբերյալ նորմերի բացակայությունը, ամբողջությամբ հրաժարվել օտարերկրյա դատական ակտերի ճանաչման պայմաններից, կարծում ենք, ոչ միայն նպատակահարմար չէ, այլ նաև ոչ իրատեսական: Ինչպես իրավագիտորեն նշում է Ա. Ի. Մուրանովը, միջազգային պայմանագրի անհրաժեշտության սկզբունքից հրաժարումը պետք է ինչ-որ կերպ փոխհատուցվի: Փոխադարձության սկզբունքը դրա համար առավել քան լավ տարբերակ է²⁴: Միևնույն ժամանակ մենք գտնում ենք, որ ՀՀ-ում փոխադարձության սկզբունքը պետք է ամրագրվի այն մեկնաբանմամբ, ըստ որի փոխադարձությունն առկա է, եթե չի ապացուցվել հակառակը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

(փոխադարձության առկայության կանխավարկած): Սա, ինչպես արդեն նշվել է, փոխադարձության մեկնաբանման ամենամեղմ տարբերակն է, որը գրեթե չեզոքացնում է փոխադարձության սկզբունքի՝ գրականության մեջ բարձրաձայնվող բոլոր թերությունները: Առաջին հերթին վերանում է փոխադարձության առկայության պարզման հետ կապված հնարավոր բարդությունների առաջացման վտանգը, քանի որ հստակորեն սահմանվում է, որ փոխադարձության բացակայության ապացույց կարող է հանդիսանալ միայն օտարերկրյա պետությունում ՀՀ դատարանի դատական ակտի ճանաչման և կատարման մերժման դեպքերի հայտանքերում: Ընդ որում ՀՀ դատարանների դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու պատճառը պետք է հանդիսացած լինի ոչ թե դատական ակտի՝ ճանաչող պետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելը, այլ դատական ակտը ՀՀ դատարանների կողմից կայացված լինելու հանգամանքը՝ ճանաչող պետության և ՀՀ միջև միջազգային պայմանագրի, դիվանագիտական հարաբերությունների բացակայության կամ այլ պատճառներով:

Միևնույն ժամանակ փոխադարձության սկզբունքի վերոնշյալ մեկնաբանմամբ ամրագրումը նաև պատասխանում է այն հարցին, թե ՀՀ-ում որ մարմնի վրա պետք է դրվի օտարերկրյա պետությունում փոխադարձության առկայությունը պարզելու պարտավորությունը: Նման հարց կարող է ծագել այն պատճառով, որ փոխադարձության սկզբունքը ամրագրած պետություններում փոխադարձության առկայությունը պարզելու լիազորությունը դրված է տարբեր մարմինների վրա: Այսպես, Գերմանիայում փոխադարձության առկայության գնահատմամբ ավանդաբար զբաղվում են դատական մարմինները²⁵, իսկ, օրինակ, Հունգարիայում, ինչպես նաև Չեխոսլովակիայի նախկին Հանրապետությունում, փոխադարձությունը հաստատվում էր արդարադատության նախարարության կողմից²⁶: Քանի որ, մեր կարծիքով, ՀՀ-ում պետք է գործի փոխադարձության առկայության կանխավարկածի սկզբունքը, փոխադարձության բացակայությունը պետք է ապացուցվի դատարանում, և դա պետք է ապացուցի դատավարության այն կողմը, ով ձգտում է հասնել ՀՀ դատարանում օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման մերժմանը: Դա ամբողջությամբ կհամա-

պատասխանի նաև ՀՀ-ում գործող մրցակցային դատավարության պահանջին, որտեղ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ներկայացնելու իր ապացույցները: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ նպատակահարմար կլինի ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանմանը²⁷ վերապահել գործառույթ՝ վարելու այն պետությունների ցանկը, որոնք չեն պահպանում Հայաստանի Հանրապետության հետ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության սկզբունքը, և որոնց դատարանների դատական պրակտիկայում առկա են ՀՀ դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության մերժման դեպքեր, որը հնարավորություն կտա ներպետական դատարաններին օտարերկրյա պետության դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդությունը քննելիս անհրաժեշտության դեպքում՝ կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, հարցում կատարել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ տվյալ պետությունում ՀՀ դատարանների դատական ակտերի նկատմամբ փոխադարձության սկզբունքի պահպանության հարցը պարզելու համար:

Կարծում ենք նաև, որ ՀՀ-ում փոխադարձության ամրագրումից հետո ներպետական դատարանները պետք է առաջնորդվեն մասնակի փոխադարձության պահպանման պահանջով: Այսինքն՝ ՀՀ դատարանները իրավունք կունենան մերժել օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը, եթե գործով ապացուցվում է, որ օտարերկրյա պետության դատական պրակտիկայում առկա են ՀՀ դատարանների համանման գործերով կայացված դատական ակտերի ճանաչման և կատարման մերժման դեպքեր:

Միևնույն ժամանակ մենք ամբողջովին համաձայն ենք Գ.Վ. Լիտվինսկու հետ, ով նշում է, որ պետությունների միջև այս կամ այն հարցում դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը չի զրկում այդ պետությունների քաղաքացիներին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ամրագրված այնպիսի իրավունքների պաշտպանությունից, ինչպիսին է, առաջին հերթին, Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, որը կարող է խախտվել ան-

www.lawinstitute.am

ձանց իրավական վիճակ սահմանող դատական ակտերը չճանաչելով: Այդպիսի դատական ակտեր կարող են լինել ամուսնալուծության վերաբերյալ վճիռները, որոնց չճանաչումը անձանց գրկում է կրկին ամուսնանալու հնարավորությունից, անձի անվան փոփոխության վերաբերյալ դատական ակտերը և այլն²⁸: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի (անձին մահացած հայտարարելու, կամ անհայտ բացակայող ճանաչելու, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, օտարերկրյա քաղաքացու որդեգրման, հայրության ճանաչման և այլն), ինչպես նաև ամուսնալուծությունների կամ ամուսնությունը անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտերը պետք է ճանաչվեն անկախ միջազգային պայմանագրի և փոխադարձության առկայությունից²⁹:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ դատական պրակտիկայում առկա են օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում: Ընդ որում օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու որոշումների հիմքում դրվել է հենց փոխադարձության սկզբունքը: Այսպես, ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քննության առնելով ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես տեղամասի Վերին դատարանի կողմից ըստ հայցի Ա. Գ.-ի ընդդեմ Հ.Բ.-ի ամուսնալուծության և ընդհանուր համատեղ սեփականության բաժանման պահանջների մասին գործով 26.04.2011թ. կայացված վճիռը ՀՀ-ում գտնվող գույքի նկատմամբ Հ.Բ.-ի իրավունքի ճանաչման մասով ճանաչելու և կատարումը թույլատրելու մասին միջնորդությունը (դատական ակտում նշված է դատական հանձնարարություն, սակայն մենք արդեն նշել ենք, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը որևէ դեպքում չի կարող դիտվել որպես դատական հանձնարարության կատարում), որոշել է բավարարել այն: Չնայած ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև գոյություն չունի դատական ակտի ճանաչման վերաբերյալ պայմանագիր, դատարանը, առաջնորդվելով «ՀՀ կառավարության և ԱՄՆ-ի կառավարության միջև ներդրումների խրախուսման մասին» պայմանագրով, որի 6-րդ հոդվածը

կարգավորում է փոխադարձության ձգտող երկու կառավարությունների հարաբերությունները և սկզբունքները, գտել է, որ փոխադարձության սկզբունքը իրավունքի անալոգիայի ուժով ենթակա է պարտադիր կիրառման դատական ակտերի ճանաչման հարաբերությունների նկատմամբ: Բացի այդ՝ ԱՄՆ-ի դատարանի վճռի ճանաչման միջնորդությունը քննելիս դատարանը օրենքի անալոգիայի ուժով առաջնորդվել է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958թ. Նյու-Յորքի կոնվենցիայով և ի վերջո դրսևորելով բարի կամք՝ «bona fide», որոշել է բավարարել այն³⁰: ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը համարելով դրական քայլ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում՝ այնուամենայնիվ պետք է նշենք, որ դատարանի հիմնավորումները միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում ԱՄՆ-ի դատական ակտը ճանաչելու վերաբերյալ, մեղմ ասած, վիճելի են: Եթե անգամ ընդունենք, որ դատարանը ճիշտ է վարվել իրավական համագործակցության հետ որևէ առնչություն չունեցող ներդրումների մասին պայմանագրում անբազրաված դրույթը՝ ԱՄՆ և ՀՀ կառավարությունների՝ փոխադարձության ձգտելու մասին իրավական համագործակցության բնագավառում ընդհանուր սկզբունք ճանաչելով և այդ սկզբունքը՝ իրավունքի անալոգիայի ուժով կիրառելով (չնայած այս դեպքում ևս կարծում ենք, որ նման քայլի իրավացիության դեմ հակափաստարկներն ավելի շատ են), ապա Նյու-Յորքի կոնվենցիայի դրույթները կիրառելը օրենքի անալոգիայի ուժով՝ ԱՄՆ դատարանի դատական ակտի ճանաչման և կատարման հարաբերությունները կարգավորելու համար որևէ բացատրություն ունենալ չի կարող: Օրենքի անալոգիան կամ համանմանությունը չկարգավորված հարաբերությունների նկատմամբ **նմանօրինակ** (ընդգծումը հեղինակի կողմից - Պ.Թ.) հարաբերությունները կարգավորող օրենքի նորմի կիրառումն է³¹: Նյույորքյան կոնվենցիան կարգավորում է միայն արբիտրաժային դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման հետ կապված իրավահարաբերությունները, իսկ արբիտրաժային կարգով իրավունքների պաշտպանությունը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական ձևի մեջ չմտնող, դրանից տարբերվող սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինք-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նուրույն ձև է³²: Հետևաբար նյութը քայան կոնվենցիան չի կարգավորում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման իրավահարաբերություններին համանման իրավահարաբերություններ, և օրենքի անալոգիայի ուժով այս Կոնվենցիան կիրառելի օտարերկրյա դատական ակտերի ճանաչմանը և կատարմանը վերաբերող իրավահարաբերությունները կարգավորելու համար անթույլատրելի է:

Միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման թույլատրելու վերաբերյալ վերոնշյալ որոշումը, որտեղ օրենքի անալոգիայի ուժով կիրառվել է փոխադարձությունը, միակը չէ ՀՀ դատական պրակտիկայում: Նույն հիմնավորումներով ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ճանաչել է նաև Ֆրանսիայի Սեն Նազերի Բարձրագույն ատյանի դատարանի 28.03.2011թ. վճիռը: Այս պետության հետ ՀՀ-ն ևս չունի դատական ակտերի ճանաչման վերաբերյալ միջազգային պայմանագիր, և դատարանը կրկին իրավունքի անալոգիայի ուժով կիրառել է փոխադարձություն նախատեսող՝ 31.05.1995թ. «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև համաձայնության, բարեկամության և համագործակցության մասին» պայմանագրով և նյութը քայան կոնվենցիան՝ օրենքի անալոգիայի ուժով³³: Հետագայում ՀՀ դատական պրակտիկայում նմանօրինակ, մեղմ ասած, ոչ միանշանակ դատական որոշումներից խուսափելու համար ևս անհրաժեշտ է փոխադարձության սկզբունքն օրենսդրորեն ամրագրել ՀՀ-ում:

Այսպիսով, կարծում ենք, նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը կարգավորող նորմերում ամրագրել փոխադարձության սկզբունքը: Ընդ որում, մեր կողմից առաջարկվող մեկնաբանությամբ փոխադարձության սկզբունքի ամրագրումը ՀՀ օրենսդրությունում գրեթե ամբողջությամբ ազատականացնում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում: Միևնույն ժամանակ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կա-

տարման ոլորտում առանց օրենսդրական փոփոխությունների՝ մասնավորապես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտի մանրամասն կարգավորման, դրա ազատականացումը հղի կարող է լինել բազմաթիվ խնդիրներով և վտանգներով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության սկզբունքի ամրագրման հետ միաժամանակ հստակորեն ամրագրել այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի օտարերկրյա դատական ակտը, օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերի սպառնիչ ցանկը, այն գործերի շրջանակը, որոնք քննելու և լուծելու բացառիկ իրավասությունը պատկանում է ՀՀ դատարաններին և այլն:

Փոխադարձության սկզբունքի ամրագրման հետ միաժամանակ միջազգային պայմանագրի առկայության պահանջից, կարծում ենք, նույնպես պետք չէ հրաժարվել: Ինչպես իրավագիտորեն նշվում է գրականության մեջ, փոխադարձության առկայության ամենավստահելի ապացույցը միջազգային պայմանագրի առկայությունն է³⁴: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունը պետք է շարունակի իրավական օգնության մասին միջազգային երկկողմ պայմանագրեր կնքելու, ինչպես նաև բազմակողմ կոնվենցիաներին միանալու ուղղությամբ աշխատանքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում միջազգային պայմանագրի առկայության ինպերատիվ պահանջը պետք է փոխարինվի և լրացվի փոխադարձության առկայության պահանջով: Իր հերթին փոխադարձության պահանջն էլ օրենսդրորեն պետք է ստանա «ամենամեղմ» ձևակերպումը, ըստ որի փոխադարձությունն առկա է, եթե չի ապացուցվել հակառակը: Բացի այդ՝ ՀՀ-ում պետք է կիրառվի մասնակի փոխադարձության սկզբունքը, ըստ որի՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու համար բավարար է, որ համանման գործով ՀՀ դատարանի դատական ակտի ճանաչումը և կատարումը մերժելու դեպք հայցող պետության դատական պրակտիկայում առկա չլինի: Բացի այդ՝ անձի իրավական վիճակի վերաբերյալ գործերով փոխադարձության առկայություն ևս չպետք է պահանջվի:

www.lawinstitute.am

- ¹ Տե՛ս ՌԴ 14.11.2002թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետ: <http://www.consultant.ru/popular/gpkrf/>
- ² Տե՛ս Ուզբեկստանի Հանրապետության 30.08.1997թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածը: http://fmc.uz/legisl.php?id=k_grajd_pr_42
- ³ Տե՛ս Տաջիկստանի Հանրապետության 05.01.2008թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածը: http://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=21129
- ⁴ Տե՛ս Ղրղզստանի Հանրապետության 24.11.1999թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին կետը: http://online.adviser.kg/Document/?link_id=1000870519
- ⁵ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության 30.05.2003թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին կետը: http://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=3837
- ⁶ Տե՛ս Кузнецов Е.Н. Исполнительное производство Франции: Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург, 2004, С. 23-24.
- ⁷ Տե՛ս Толочко О. Рассмотрение судами гражданских дел с иностранным элементом // Судовы веснік, Минск, 1998, N 3.
- ⁸ Տե՛ս СНГ: реформа гражданского процессуального права. Материалы международной конференции, под ред. Богуславского М.М. и Трунка А. (Հոդվածի հեղինակն է Մ.Մ. Բոգուսլավսկին). Москва, «Городец», 2002, С. 174.
- ⁹ Տե՛ս Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 186.
- ¹⁰ Տե՛ս Enforcement of Foreign Judgements Worldwide, Editors C. Platto, W.G. Horton, London, Boston, Graham & Trotman, 1993, էջ 3:
- ¹¹ ՌԴ դատական պրակտիկայում փոխադարձության հիման վրա օտարերկրյա դատական ակտերի ճանաչման առաջին որոշումը կայացվել է Մոսկովյան շրջանի Ֆեդերատիվ արբիտրաժային դատարանի կողմից 02.03.2006թ., որտեղ դատարանը հանգել էր եզրակացության, որ Անգլիայի և Ուելսի պետական դատարանի որոշումը անհրաժեշտ է ճանաչել և կատարման թույլատրել՝ անկախ միջազգային պայմանագրի առկայության հանգամանքից: Տե՛ս Ванеев А., Решения иностранных судов в России: Признание и приведение в исполнение. Корпоративный Юрист, N 3, 2007, С. 40.
- ¹² Տե՛ս Зайцев Р. В. Признание и приведение в исполнение в России иностранных судебных актов. Москва, “Волтерс Клувер”, 2007, С. 147.
- ¹³ Տե՛ս Միջազգային մասնավոր իրավունքի մասին Թուրքիայի օրենքի 38-րդ հոդվածը: Հղումն ըստ՝ Международное частное право, учебник, 3-е изд-е, отв. Ред. Марышева Н.И. “Волтерс Клувер”, Москва, 2011, С. 820:
- ¹⁴ Տե՛ս Конев Д. В. Признание и приведение в исполнение иностранных судебных актов по гражданским и торговым делам в Федеративной Республике Германия: сравнительно-правовой анализ. Дисс. ... канд. юрид. наук, Екатеринбург – 2008, С. 169.
- ¹⁵ Տե՛ս Ուկրաինայի 18.03.2004թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածը: <http://meget.kiev.ua/kodeks/gpk/glava-8-1/>
- ¹⁶ Տե՛ս Бендевский Т. Международное частное право: Учебник/ Перевод с македонского Клейн С.Ю. Отв. ред. Суханов Е.А. Москва, Статут, 2005, С. 392.
- ¹⁷ Տե՛ս Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 193.
- ¹⁸ Տե՛ս Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 186.
- ¹⁹ Տե՛ս Juliot de la Morandiere. Travaux de la Commission de reforme du Code civil (annee 1949-1950), էջ 771: Հղումն ըստ՝ Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 198.
- ²⁰ Տե՛ս Нешатаева Т.Н. Суд и общепризнанные принципы и нормы международного частного права. /Нешатаева Т.Н. // Вестник Высшего Арбитражного Суда РФ, 2004, N 3, С. 130-131.
- ²¹ Տե՛ս Шак Х. Международное гражданское процессуальное право. Уч.: Перевод с немецкого. Москва, Изд. “БЕК”, 2001, С. 16.
- ²² Տե՛ս, օրինակ, Канашевский В. А. Международное частное право. Учебник, Изд. 2-е, Москва, “Международные отношения”, 2009, С. 645-646; Шак Х. Международное гражданское процессуальное право. Уч.: Перевод с немецкого. Москва, Изд. “БЕК”, 2001, С. 425, Сорокина С.С. Признание и приведение в исполнение решений иностранных судов на территории Российской Федерации. Дисс. ... канд. юрид. наук, Москва, 2005, С. 26:

²³ Տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 3-րդ պարագրաֆը:

²⁴ Տե՛ս Муранов А.И. Международный договор и взаимность как основания приведения в исполнение в России иностранных судебных решений. Москва, 2003, С. 64-65.

²⁵ Տե՛ս Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 194.

²⁶ Տե՛ս Лунц Л.А. Курс международного частного права: В 3-х т. Москва, “Спарк”, 2002, С. 913.

²⁷ ՀՀ արդարադատության նախարարությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հարցերով զբաղվում է միջազգային իրավական հարաբերությունների վարչության դատական հանձնարարությունների բաժինը: <http://moj.am/structures/view/structure/1>

²⁸ Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 204.

²⁹ Պետք է նշել, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքը նախատեսում է օտարերկրյա պետություններում կատարված օտարերկրյա քաղաքացիների միջև, ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև կատարված ամուսնալուծությունները ճանաչելու հնարավորություն՝ առանց միջազգային պայմանագրի կամ փոխադարձության առկայության պայմանի: Մասնավորապես ՀՀ ընտանեկան օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «ՀՀ քաղաքացիների միջև կամ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնալուծությունը, որը կատարվել է ՀՀ տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում»: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնալուծությունը, որը կատարվել է ՀՀ տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում»: Նշված հոդվածի բովանդակությունից պարզ չի դառնում՝ արդյոք այն վերաբերում է նաև ամուսնալուծությունների վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերի՝ ՀՀ-ում ճանաչմանը, թե ոչ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հոդվածում խոսվում է հյուպատոսական օրինականացման անհրաժեշտության մասին, ամենայն հավանականությամբ այն վերաբերում է միայն ոչ դատական ձևով կատարված ամուսնալուծությունների վերաբերյալ օտարերկրյա պետության ոչ դատական մարմինների ակտերը ՀՀ-ում ճանաչելուն: Բացի հյուպատոսական վավերացումից ԼՕ 145-րդ հոդվածը պահանջում է նաև, որ ամուսնալուծությունները, անկախ նրանից, թե որտեղ են կատարվել, կատարված լինեն այն պետության օրենքներին համապատասխան, որտեղ կնքվել են:

³⁰ Տե՛ս ՀՀ Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 12.10.2011թ. որոշումը ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելես տեղամասի Վերին դատարանի կողմից 26.04.2011թ. կայացված վճիռը ՀՀ-ում ճանաչելու և դրա կատարումը թույլատրելու մասին:

³¹ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նաիրի, 2001, էջ 251:

³² Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Առևտրային արբիտրաժը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 9:

³³ Տե՛ս ՀՀ Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.01.2012թ. որոշումը Ֆրանսիայի Սեն Նազերի Բարձրագույն ատյանի դատարանի կողմից 28.03.2011թ. կայացված վճիռը ՀՀ-ում ճանաչելու և դրա կատարումը թույլատրելու մասին:

³⁴ Տե՛ս Литвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 193-194.

РЕЗЮМЕ

Наличие взаимности как предпосылка для признания и исполнения иностранных судебных актов в РА

Эта статья посвящена признанию и исполнению иностранных судебных актов по гражданским делам в Республике Армения. Институт признания и исполнения иностранных судебных актов является одним из самых сложных сфер гражданского процессуального права. В наши дни, в условиях глобализации, одним из самых важных направлений развития национального законодательства, которое призвано активизировать международные отношения Армении с зарубежными странами, является улучшение механизмов защиты прав человека, права, которые уже подтверждены иностранными судебными актами. Несмотря на это, в

национальном законодательстве Армении, в частности в Гражданском процессуальном кодексе РА, институт признания и исполнения иностранных судебных актов регулируется в недостаточной степени.

В настоящей статье автор говорит о принципе взаимности как о предпосылке признания и исполнения иностранных судебных актов в Армении. Несмотря на то, что согласно ГПК РА, единственной предпосылкой для признания и исполнения иностранных судебных актов является наличие многостороннего договора о правовой помощи, в котором участвует Армения или двустороннего договора о правовой помощи между РА и другим государством, которые предусматривают возможность признания и исполнения судебных решений, автор предлагает к этой предпосылке добавить также условие взаимности, которое позволит национальным судам Армении признать и исполнять судебные решения таких государств, с которыми у Армении нет соответствующего договора, но которые в свою очередь признают и исполняют судебные акты армянских судов. Предусмотрение такой предпосылки в ГПК РА позволит либерализовать институт признания и исполнения иностранных судебных актов в Армении, что в свою очередь позволит Армении выйти из правовой изоляции и активизировать международные отношения с другими странами. В то же время, автор предлагает усилить критерии в ГПК РА, которым должен соответствовать иностранный судебный акт для признания и исполнения в Армении.

SUMMARY

The Existence of Reciprocity as a Precondition for recognition and enforcement of foreign judgements in RA

This article is dedicated to the recognition and enforcement of foreign judgements in civil matters in the Republic of Armenia. The institute of recognition and enforcement of foreign judgements is one of the most difficult spheres of the civil procedural law. Nowadays in the condition of globalization, one of the most important directions or courses of the development of national legislation, which is called to promote Armenia's international relationships with foreign countries, is the improvement of the mechanism of human rights protection, which are already confirmed by foreign judgements. Despite of this in the national legislation of Armenia, particularly in the Civil Procedure Code of RA, the institute of the recognition and enforcement of foreign judgements is regulated not properly.

In this article the author speaks about the principle of reciprocity as a precondition for recognizing and enforcing foreign judgements in Armenia. Though in the CPC of RA the only precondition for recognition and enforcement of foreign judgements is the existence of a multilateral agreement on legal assistance in which participates RA or bilateral agreement on legal assistance between RA and other country, which provides the possibility of recognition and enforcement of judgements, the author offers to add to this precondition also the precondition of reciprocity, which will allow the national courts of RA to recognize and enforce foreign judgements, if the country where the judgement is given recognizes and enforces the judgements of Armenian courts, even if there is no treaty between RA and that country. The inclusion of this precondition would liberalize the institute of the recognition and enforcement of foreign judgement in Armenia, which would allow Armenia to avoid the legal isolation and to promote the development of international relationships with other countries. At the same time the author offers to strengthen the criteria in the CPC of RA which should be met by foreign judgements to be recognized and enforced in Armenia.